Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
9-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Հելլադայում սիրված աստվածուհիներից էր Արտեմիսը, **ում** պաշտամունքը **գնալով՝** տարածվեց ու հասավ մինչև Փոքր Ասիա: Արտեմիսը Հունաստանում որսի **աստվածուհին** էր, իսկ Եփեսոսում պտղաբերության խորհրդանիշը: Եփեսոսցիները ի պատիվ Օլիմպոսի դիցուհու՝ քաղաքի բարձրադիր հատվածում կառուցեցին շքեղ մի տաճար:

Հրաշագեղ շինությունը՝ կառուցված գրեթե հարյուր տարում դարձավ հեթանոսական պաշտամունքի կենտրոն: Իր **շքեղությամբ** ապշեցնող կառույցը դեպի իրեն էր ձգում հազարավոր զբոսաշրջիկների. **այն** իր տեսակի մեջ եզակի էր՝ նմանը չունեցող: Թվում էր՝ մարմարե շինվածքը **հավերժությանն** էր պատկանելու և մարդկությունը մշտապես ըմբոշխնելու էր այդ գեղեցկությունը, բայց կանգուն մնաց ընդամենը հարյուր տարի:

Մի օր ցնցվեց ողջ Հունաստանը, երբ լսեց տաճարի կործանման ահասարսուռ լուրը: Պարզվեց՝ Եփեսոսի բնակիչներից մեկը՝ ոմն **Հերոստրատ** իր անունը դարերի հոլովույթում անմահացնելու համար այրել էր Արտեմիսին նվիրված հրաշակերտ կառույցը:

Սուգ հագավ Եփեսոսը, ու խոր ցավից կծկվելով ասես քարացավ: Սակայն երբ քաղաքի բնակիչները սթափվեցին ծանր **մղձավանջից՝** առաջին հերթին մտածեցին՝ ինչ պատիժ սահմանեն այդ ողորմելի մարդուկի համար: Ու որոշում կայացրին՝ մեկընդմիշտ մոռանան և արգելեն որևէ տեղ հիշատակել ոճրագործի **անունը.** թող անկատար մնա նրա դարերում հավերժելու փափագը:

Սակայն Հին աշխարհի **որոշ** հեղինակների՝ այդ աններելի արարքի մասին իրենց մատյաններում գրի առնելը, ցավոք, նպաստեց փոքրոգի մահկանացուի ցանկությունն իրականացնելուն:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները, անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները: (7 միավոր)
2. Տեքստից դո՛ւրս գրիր անորոշ դերբայով կազմված դարձվածները՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով շարահյուսական պաշտոնը: (6 միավոր)
3.Շարահյուսորեն վերլուծի՛ր բնագրում ընդգծված բառերը: (5 միավոր)
4. Նշի՛ր տեքստում գործածված ***մինչև, իսկ, ասես, թող, սակայն*** բառերից յուրաքանչյուրի տարբեր խոսքիմասային արժեքները: (5 միավոր)
5. Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություններ՝ գործածելով **այն, այնքան, նրանց, այնպես, այնպիսի** հարաբերյալները: (5 միավոր)
6.Դո՛ւրս գրիր տեքստում գործածված պարզ և բաղադրյալ ստորոգյալների երկուական օրինակ: (2 միավոր)
7.Գրի՛ր տրված բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. **վեհերոտ, անտերունչ, տորմիդ, պարարտ, շաղակրատ, ջրարբի, մույթ, երամակ, քենակալ, աչառու**:
(5 միավոր)
8. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքները. **անարգանքի այունին գամել, պղտոր ջրում ձուկ որսալ, սայլը տեղից շարժել, կառքի հինգերորդ անիվ, օձը բնից հանել:** (5 միավոր)
9.Գրի՛ր շարադրություն՝ «Ես եմ կերտում իմ ապագան» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)